



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**Archbishop Moushegh Mardirossian, Prelate**  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐԸ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԴԱՍԸ**  
**Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ ԱՅՑԵԼԵՑԻՆ «ԱՐԱՐԱՏ ՏՈՒՆ»**

Արեւմտեան Թեմիս հոգեւոր ծառայութեան մարզին մէջ կ'իյնայ նաեւ «Արարատ Տան» հոգեւոր մատակարարութեամբ զբաղիլը: Առ այդ, այս տարի եւս, Թեմիս բարեխնամ Առաջնորդ՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, շրջապատուած կուսակրօն եւ քահանայ հայրերով, Երեքշաբթի, Ապրիլ 18-ի առաւօտուն այցելեց «Արարատ Տուն» եւ հանդիսապետեց ու նախագահեց Ս. Չատկուան եւ Յիսուսի հրաշափառ Յարութեան տօնին առթիւ մատուցուած Ս. եւ անմահ Պատարագին, զոր մատոյց՝ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Կոմիտաս Քիւյ. Թորոսեան:

Ս. Պատարագին ներկայ էին «Արարատ Տան» բնակիչները եւ պաշտօնեութիւնը: Իր քարոզին մէջ Տէր Հայրը ներկաներուն բացատրեց, թէ Յիսուս մեզի՝ մարդոցս համար աշխարհ եկաւ, չարչարուեցաւ, խաչուեցաւ ու թաղուեցաւ, սակայն երրորդ օրը յարութիւն առաւ եւ խոստացաւ յարութիւն եւ յաւիտենական կեանք տալ բոլոր անոնց, որոնք Իրեն կը հաւատան ու Իրեն կը վստահին իրենց կեանքերը, որովհետեւ Յիսուս ի՛նք է յարութիւնը եւ կեանքը:

Պատարագի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը եւ ողջ եկեղեցականաց դասը խորան բարձրացան եւ երգեցին Ս. Յարութեան նուիրուած «Այսօր Յարեաւ» շարականը, բոլոր ներկաներուն աւետելով, թէ՛ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Առաջնորդ Սրբազանը իր խօսքին մէջ քաջալերեց «Արարատ Տան» բնակիչները եւ շեշտեց այն, որ Քրիստոս աշխարհ գալով մարդոց գանազան տեսակի հիւանդութիւնները բժշկեց, իսկ հիմա Իր հրաշալի յարութեամբ բոլորիս կեանք կը պարգեւէ, առաւել կեանքը: Ապա բոլորը միասին երգեցին Տէրունական Աղօթքը:

Յաւարտ Ս. Պատարագի, հոգեւորականաց դասը անցաւ «Արարատ Տան» հիւանդանոցի բաժինը, ուր Առաջնորդ Սրբազան Հայրը իր ուրախութիւնը յայտնեց պատասպարեալ հայրերուն եւ մայրերուն, նկատելով, որ կը գտնուին գուրգուրոտ եւ սիրով գեղուն անձերու խնամքին տակ, բարձրօրէն գնահատեց հաստատութեան պատասխանատուները, տնօրէնութիւնը, պաշտօնեութիւնը եւ նուիրեալ ծառայողները, բոլորին Ս. Յարութեան տօնը շնորհաւորեց եւ մաղթեց, որ յարուցեալ Փրկիչը բոլորին շնորհէ առաւել կեանք, ծառայութեան վարձատրութիւն, հոգեւոր ուրախութիւն եւ երջանկութիւն: Ապա կատարուեցաւ Ս. Չատկուան տնօրինեքի արարողութիւն, հաւաքական խոստովանանք եւ քահանայ հայրեր Ս. Հաղորդութիւն տուին, որմէ ետք բոլորը միաբերան երգեցին «Հայր Մեր»ը եւ «Կիլիկիա» երգը:

Արարողութեանց աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը եւ հոգեւորականաց դասը, «Արարատ Տան» բնակիչներուն եւ պատասխանատուներուն հետ վայելեցին

Աստուծոյ բարիքներէն՝ սեղանակից ըլլալով անոնց, որմէ ետք շնորհակալութեան փոխադարձ զգացումներով բաժնուեցան յոյսով եւ ուրախութեամբ լեցուն:

## PRELATE AND CLERGY MEMBERS CONDUCT EASTER MASS AT ARARAT HOME

On Tuesday, April 18, at 10:00 a.m. Holy Mass was conducted at Ararat Home of Mission Hills, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of our Prelacy clergy.

Officiating over Holy Mass was Rev. Gomidas Torossian of Glendale's St. Mary's Church, who also delivered the sermon. Following Mass, the Prelate and clergy visited the hospital section of Ararat Home where the residents received Holy Communion.

After the church services, the Prelate and clergy order met briefly with the Board and staff of Ararat Home, wishing them all good health and success.